



Թ. ՏԱՐԻ ԹԻՒ 51

ՏԱՐԱՐ

17 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1905

Կ. ՊՈԼՍՈՑ ՀԱՄԱՐ	ԳԱԻԱՌԱՑ ՀԱՄԱՐ	ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ
Տարեկան 50 ՂԸ.	Տարեկան 54 ՂԸ.	Տարեկան 12 ՅԲ.
Վեցամսեայ 25 ,	Վեցամսեայ 27 ,	Վեցամսեայ 6 ,

ԳԱՌՆԻԿ ՍԱՐԳԻՍՕՅ ԵՒ ԸՆԿ

ՍՏԾ ՎԱԺԱՌԱՏՈՐՆ

ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԺԱՄԱՅՈՑՅՆԵՐՈՒ, ՇՂԹԱՅՆԵՐՈՒ ԵՒ ԳՈՀԱՐԵՂԻՆԱՑ

Կ. Պոլիս, Ճեղաղ Պեյ խանին սալ, Թիւ 16

Մասնաւորապէս կը խնդրուի ուշադրութիւն ընել ՍԱՐԳԻՍՕՅ անունը կեղծող կարգ մը նորեկուկ ժամացոյցներուն որոնք հրապարակի վրայ կը շրջին:

ՍԱՐԳԻՍՕՅ ժամացոյցները ջերմապէս կը յանձնարարուին ինքպէս նաեւ ԶԵՆԻԹԸ՝ ԲԵ՛ Կ. Պոլիս, Եւ ԲԵ՛ Գաւառները, ուրկէ եղած յանձնարարութիւնք անմիջապէս կը կատարուին գահացուցիչ պայմաններով:

Ծանօթ. — ԶԵՆԻԹ ժամացոյցները Բաքիի 1900 Արուեստահանդեսին մէջ ամենեւնի բարձր պարգէին արժանացած են:

Հատը 40 փարս

ԱՐՏՈՆԱՏԷՐ — ԱՐՄԷՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

(آ. آصاوریان) شرکت مرئیہ مطبعی — باب عالی جاده سنده نومرو ۵۲

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍԱՑՈՒՐԵԱՆ

Կ. Պոլիս, Պապը-Ալի հասցեսի Թիւ 52



ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԾԱԲԱԹԱԹԵՐԹ

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ

Թ. ՏԱՐԻ ԹԻԻ 51

ԾԱԲԱԹ

17 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1905

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Նկարագրի պակասը (հմբագրական). — Վ. ՓԱՓԱԶԵԱՆ: Նամակներ. — ԱՇՈՏ ՄԱՏԱԹԵԱՆՑ: Բանաստեղծն եւ իր երգ (Քերթուած): Իմ օրագիրս. — ՊԵՆԴՐԻՍ ՇԱՀԻՆԵԱՆ: Ակամայ գնաց (Ոսանաւոր). — ՍՏԵՓԱՆ ԽԱԶՈՒՆԻ: Քաղաքապետութիւնն ու նոր կենցաղագիտութիւն (Ընթանիմ իր ճան մեջ — Ազգակցական յարաբերութիւններ). — ՖԻՄԻ ՇԻՐԻՆԵԱՆ: Կարեկցական նամականի (Թե ինչեւ կ'ըսեմ Նինիս). — ՎԱՀԱՆ ՓԱՓԱԶԵԱՆ: Կը մտածեմ. — ԼԵՒՈՆ ԱԻԱԴԵԱՆ: Եսքրուան շուրեր:

ՆԿԱՐԱԳԻՐԻ ՊԱԿԱՍԸ

Ատեն մը, լաւ կը յիշեմ, ամաթօռ խմբագիր մը իր շաբթուան գրուածքներուն ճակատը կը դնէր սա վերնագիրը — Ի՞նչ գոյն ունիմք — ու կը ջանար ձաղկել մեր կրթական, եկեղեցական և ընկերական բարքերը, որոնք շուտով ու թեթեւ հովի պէս կ'անցնէին մեր վրայէն, առանց օգտակարութիւն մը ունենալու, և հասնելու իրենց շինիչ նպատակին: Այսօր կ'ուզենք փոխել այդ վերտառութիւնը և քիչ մ'ալ խօսիլ օրուան մամուլին, օրագրութեան և թէ պարբերականներու վրայ որոշելու համար իրենց բոյն գոյնը, ուղղութիւնը:

Մինչեւ այսօր, մեր մէջ չէ եղած թերթ մը, հանդէս մը որ հեռու անձնական չահասիրութենէ, իր սիւնակները նուիրէ հանրութեան օգտին, անոր բարոյական զարգացման: Ինչ որ կը մշակուի մեր մամուլին մէջ, անձնական զբաղումի, քսակներու պարարտութեան և աղբուստի ապահովութենէ, ասոնցմէ դուրս ժողովուրդը, այսինքն ընթերցողը մշակներ, գործաւորներ կը

համարուին, որոնք իրենց համեստ տասնոցներով կամ քառասունոցներով կը ջանան, կ'աշխատին ընդ թերթերու վարիչներուն քսակը, որ Դանայեան կարաս մ'է ու չի լենար, չի յագենար, երբէ՛ք :

Ամէն թերթի վարիչ՝ կուգէ կը փափաքի միակը ըլլալ հրապարակի վրայ : Իրմէ դուրս օրագրութիւնը չ'ընդունիր, սխալներ, հակասութիւններ և ուրիշ ուղղութիւն մը կը տեսնէ անոնց մէջ ու կը յոխորտայ :

Մենք լրագրի վարիչներս, այնքան նախանձոտ ենք մէկ մէկու հանդէպ, որչափ չափաի ըլլային երբէք երկու սրակցորդ ամուլներ : Իրարու աչքի մէջ կը նայինք, իրարու թերթ կը պրպտենք, բան մը, սխալ մը, վրիպում մը, անուշադրութիւն մը, վերջապէս խնդիր մը գտնելու համար, որով կը թեւաւորուինք, կ'ուռինք, կը հպարտանանք սիրամաղղներու պէս, և բնաւ չենք խորհիր անգամ մը մեր ոտքերուն՝ այսինքն մենք մեզի անգրաւ գառնալու :

Ձենք փափաքիր որ մենէ զատ գոյութիւն ունեցող միւս պաշտօնակիցներ քաջալերուին, անոնց քիռածին առաւելութիւնը մեր աչքը կը հանէ կարծես, ու միշտ առիթը կը փնտռենք ջախջախելու, ձաղկելու, քաշքշելու զանոնք :

Հաւատացէք, եթէ ես ալ լրագրութիւնը իբր ապրուստիս միակ միջոցը ընտրած ըլլայի, թերեւս վարակուէի այս ախտէն, բայց ուրախ եմ յայտարարելու թէ՝ գրականութիւնը իբր անմեղ ժամանց չատ բաներէ պակի սիրելուս համար է որ հինգ տարիէ ի վեր կը շարունակեմ ու կը գտնուիմ այս ասպարէզին մէջ :

Այս տողերը գրելու տուն կուտայ ինձ երկու շաբաթէ ի վեր հրապարակին վրայ ծեծող բանագողութեան մը խնդիրը :

Երգիծաբան ճանչցուած մէկը, Եւրոպական թերթի մը սրամիտ մէկ յօդուածը կարդալով՝ կը հաւնի, և անոր ինչ ինչ մասերը փոխելով՝ իր իսկ ստորագրութեամբ հանդէսի մը կուտայ հրատարակութեան : Այս թարգմանութիւնը կամ բանագողութիւնը կարգացող երիտասարդ մը կուահելով, ուրիշ հանդէսի մը մէջ տեղադրելու կ'ընէ խնդիրը, ամենայն իրաւամբ, քանի որ յօդուածին տակ չերեւիր ո՛չ քաղ. և ո՛չ ալ հետազոտութեամբ բառը, որոնցմով կարելի էր փրկուիլ : Եւ ահա գանկերը կուռին և Պր. բանագողը կը յանգրգնի հրապարակաւ դրամական պարգեւներ խոստանալ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ հաստատողին :

Իրականութիւնը կը հաստատուի, զորս դու պատուիրեցեր, և խնդիրը Collin-Maillard կը դառնայ : Պր. բանագողը աչքերը կապած, ձեռքերը օդին կ'սկսի հոս հոն իյնալ, նամակներ կը գրէ, մեղայագիրներ կը խմբագրէ, և արդիւնքը կ'ըլլայ՝ վրան բաց պղտիկութիւն մը :

Թերթերու վարիչներ, պէտք է նկատի առնեն, կամ գիտնան ընթերցող հասարակութեան կարողութիւնը և անոնց գրական մակարդակը, և տեղի չի տան քննադատութիւններու, խծբանքներու, ընթերցող հասարակութիւնը ալսօր ի վիճակի է գնահատելու կամ քննադատելու իրեն հրամցուած թրթերթները կամ հանդէսները, ինչպէս ապացուցուեցաւ վերջերս բերնի


ժամաց դարձող բանագողութեան առթիւ : Երբ մէկը՝ ըլլայ խմբագիր , ըլլայ երգիծաբան , գրիչը ձեռք առնէ բան մը արտադրելու համար , պէտք է գիտնայ թէ՝ իր ընթերցողներուն մէջ կրնան գտնուիլ անհատներ , որոնք թէ իրեն քար կը հանեն , և թէ բանագողութիւնը մէջտեղ , և ըստ այնմ՝ ընտրեն իրենց նիւթերը :

Գալով օրուան մեր մամուլին մէջ ատենէ մը ի վեր երեւցող կարգ մը գրուածքներու , պէտք է անգամ մ'ընդ միշտ ըսել թէ՝ պատճառը թերթերու վարիչներն են և պատասխանատուն անոնք :

Երկու թերթ ատեն մը իրարու հետ հաշտ կ'երթան , զիրար կը գովեն , զիրար կը բարձրացնեն , և ահա խլել խմբագիր մը իր քաբուսը քշելու համար որոմ կը ցանէ այդ երկու թերթերու սերտ յարաբերութեան մէջ , և արդիւնքը սա կ'ըլլայ որ փչող հովերը կը փոխուին , լեզուները կը դառնան , կծու ակնարկութիւնները իրարու կը յաջորդեն , և զէռօ աստիճանի ցրտութիւնը կը քարացնէ սէրը երկուքին միջեւ : Յօդաւածագիր մը կ'ըլլայ հակառակ թերթին վարիչը անուանարկելու աղտոտ լեզուաւ մը , տեղ կուտան , կարելի է ուրբուշէ մ'ընալ կ'անցնեն , ժողովուրդը կը կարգայ , կը խնդայ , կը զրօսնու և կ'սպասէ գալիք պատասխանին , որ աւելորդ է ըսել՝ Սաղմոսէն չ'ըլլար հարկաւ : Եւ ահա ասկէ կը ծնի այն լղրճուկ ռսի-ըսաներու շարքը , որոնց հանդէպ՝ ընթերցող հասարակութիւնն ալ կը զզուի , փոխանակ զուարճանալու :

Որչափ փափկանկատութիւնը ձեռքէ չի հանելու աշխատինք , պարագաներ կը ներկայանան՝ ուր դէմինին հասկցած ոճը գործածելը անհրաժեշտ կը դառնայ , ահա գրչի մարդուն նկարագիրը :

Վ. ՓԱՓԱՋԵԱՆ



ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒՆ

Չորս տարիէ ի վեր անընդհատ մեր հանդէսին հետեւողները կ'սպասեն անշուշտ Գաղանդի մեր բացառիկ թիւին , որ սովորութիւն ունինք հրատարակել ամէն տարի :

Առանց այժմէն ուռուցիկ ներքողը ընելու այդ հատընտիր եւ խնամատ թիւին , կը փութանք յայտարարել թէ՝ « Հանրագիտակ » իր յիսուն երկու թիւերը բոլորելով՝ իր տարեմուտը պիտի սկսի բացառիկ թիւով մը : Հանդէսը պիտի հրատարակուի կրկին ծաւալով 24 էջ , որոնք պիտի զարդարուին 10է աւելի յօդուածներով , եւ նոյնչափ ալ մեծադիր ու գեղեցիկ պատկերներով : Ծօղուածներ պիտի ունենան թէ՝ նախկին եւ թէ՝ ներկայ է՝ն զուարթ գրողները , Տէր-Ներսէսեան մաքուր տպագրութեամբ : Թէ՝ որոնք պիտի ըլլան անոնք , անակնկալ մը ըլլալու համար այժմէն չենք ուզեր յայտնել , բայց կը վստահացնենք մեր ընթերցողները թէ՝ մինչեւ հիմա հրատարակուած բացառիկ թիւերուն էն փայլունը ընծայելու համար ոչինչ խնայուած է Տնօրէնութեանս կողմէ :

Այս առթիւ աւելորդ չենք համարիր աւելցնել թէ , մեր այն բաժանորդները՝ որոնք չեն վճարած իրենց պարտքը , եւ կամ թէ մինչեւ Դեկտեմբերի վերջը չի փութան վճարել , այս բացառիկ թիւէն սկսելով թերթ չպիտի ստանան : Նոյն բանը կը կրկնենք նաեւ գործակալներուն , եւ կը խնդրենք որ չի զրկուելու համար այս գեղեցիկ նուէրէն , հաճին վաղ ընդ փոյթ ղրկել մեր հաշիւները :

Ստորագրուիլն մը՝ զոր չենք հրապարակել, որկած է մեզի Աշոտ Մասաթեանցի երկու նամակները: Անոնք պատասխաններ են այն երկու հարցումներուն զորս ուղղուած են իրեն մասնաւորապէս: Անոնց մէջ բացայայտօրէն կ'երեւայ Մասաթեանցի նորք ու զգայուն ուժը:

Ն Ա Մ Ա Կ Ն Ե Ր

Ա. (*)

Սիրելիս,

Ինչո՞ւ կը հարցնես ինծի թէ ո՞ր ծաղիկը աւելի կը սիրեմ: Ի՞նչպէս պատասխանել քու հարցումիդ, դո՞ւն որ այնքան փափուկ փայփայանքներով, գորովալից խնամքներով, նազանքոտ հոգածութիւնով մեծցած ես, դուն որ վայելչութենէ, կարգապահութենէ, ազնուութենէ զատ ո՛չ մէկ բանի հետ ընտանեցած ես: Երբ կը մտածեմ թէ զիս պիտի հեգնես՝ ցուրտ դող մը էութիւնս կը գրաւէ: Գուցէ ծաղրանքիդ քիչ մըն ալ տեսնութիւն խառնուի: Սակայն, քանի որ կը փափաքիս, քանի որ կը հրամայես՝ պէտք է որ հնազանդիմ: Մի՛ տարակուսիր, եթէ երբէք գաղափարներս ու զգացումներս նողկանքիդ առիթ դառնան՝ զանոնք անմիջապէս պիտի փոխեմ: Զգացումներս՝ աղուորութեանդ ինչո՞ւ կը զուին:

Նամակիս սկզբնաւորութիւնը քեզի վախճուց, այնպէս չէ՞. թերեւս կը խորհիս թէ անանկ բաներ պիտի ըսեմ՝ զորոնք չէիր յուսար: Ալ չը պիտի նեղացնեմ քեզ. ահա՛ պիտի խօսիմ: Ներէ՛ ինծի:

Սիրելիս, ես վարդը չեմ սիրեր, յասմիկը չեմ սիրեր՝ ո՛չ ալ գամելեան, ո՛չ քրիզանթէմը, ո՛չ լեւակը եւ ո՛չ ալ մեխակը: Զէ՛, ես անոնցմէ ո՛չ մէկէն կ'ախորժիմ. անոնց քով չկայ այն բանաստեղծականութիւնը, տիրութիւնը, հաւատարմութիւնը զորոնք կը փնտռեմ: Անոնք խաբող, անբաղդ, շատ սիրուն եւ պոռնիկ են:

Հիմա, գիտե՛մ, սա անպարտ ու խեղճ թուղթի կտորը, որ ճշմարտապէս սիրտիս տենչանքը ու միտքիս խոհանքը բացատրե-

լու անկարող է, յամր դարչանքով մը գետին, ոտքերուդ տակ պիտի նետես՝ ու կօշիկիդ կրունկովը պիտի ճմլես զայն ... Զոգ չէ՛:

Մարգերուն, ածուներուն մէջ, պարտիզպաններուն խնամքին եւ գուրգուրանքին տակ ստիպումով ծլող, ծաղկող, եւ ճակատագիրը կեղծ փայփայնքի մը կապուած այդ դժբաղդները չեմ սիրեր, ո՛չ մէկ գօրսաթի ծաղերուն եւ ժանեակներուն մէջ, ո՛չ մէկ ծողկամանի անզգայ գիրկին մէջ՝ հարկ եղած ազդեցութիւնը, անհրաժեշտ հրապոյրը չեն կրնար արտայայտել անոնք. ա՛խ, չէ՛, ես չեմ սիրեր այդ լիբր ծաղիկները, չեմ կրնար սիրել, հոգիս: Միայն անոնց վիճակին կ'արգահատիմ, եւ եթէ գիտնաս թէ ո՞րքան կ'արգահատիմ. զանոնք քաղելու համար հոգածու պարտիզպանին գծուծ շահասիրութեանը դիմելու է, զազիր ըղձանքը այն ձեռքերուն՝ որոնք կը նուիրեն այդ ծաղիկները, վայրկեան մը յետոյ նետելու համար՝ զանոնք ընդունող կուրծքերուն կեղծ գգուանքը երբ կ'երեւակայեմ՝ արցունքիս շիթերովը սփռիմ կ'ուզեմ այդ երանգներուն կաթիլները, որոնք միմիայն դիպուածին եւ նիւթականութեան թշուառ ու անլեզու զոհերն են ... ու սակայն, քանի մը րոպէ յետոյ, կանաչ պատանքի մը մէջ ամփոփուած սա յասմիկները, ահա՛ ուս մանկամարդ աղջիկին շուայտու կուրծքին վրայ սոնքացող գամելիսին հետ պիտի երթան կորսուելու լքումի դարչ աղբափոսին մէջ. ահաւասիկ, տես՝ նեղով անոնց հպարտութիւնը՝ որ տխուր վախճանի մը կը յանգի, գիտնալով անոնց անխմտ ու յաւակնոտ պարծանքը՝ բոլոր զգացումներովս, բոլոր սիրտովս անոնցմէ կը խորշիմ, զանոնք կ'ատեմ: Իրաւունք չունիմ միթէ, բարեկամուհիս:

Զէ՞ ...

Լա՛ւ ուրեմն. եկո՛ւր սիրելիս, եկուր ինծի հետ թափառի՛նք դաշտերն ու ծործորները ... առաջ քալենք, առաջ ... Արեգակին վերջալոյսի տմոյն ցուրբերը, տե՛ս ինչպէս ցանցնուեր են սա փոքրիկ մացառին վրայ: Զեռքդ ինծի տուր, քանի մը քայլ առաջ երթանք ... սա մացառներուն տակ

(*) Բ. Նամակը յաջորդ թիւով:

կապոյտ, ճերմակ ու դեղին քանի մը կէտեր կը տեսնուին ... այնպէս չէ՞ ... :

Ահա՛, ես այս լեռի ու հովտի մանուշակները կը սիրեմ, ու ա՛յն աստիճան կը սիրեմ որ, նայէ՛, քու ներկայութեանդ անգամ անոնց սէրիս յայտարարութիւնը ընելու կը համարձակիմ: Մի՛ նեղանար, հոգի՛ս, ես ո՛ւր որ ասանկ լքուած գեղեցկութիւն մը տեսնեմ, անարուեստ, բնական գեղեցկութեան մը հանդիպիմ՝ երկար ատեն, զլուխ խոնարհած, անոր կը յառիմ սիրանուէր ու անբարբառ:

Վստահ եղի՛ր, արեւին ճաճանչները, հովին շունչը, ցօղերը, անձրեւին կաթիլները առանց այդ մացառներուն խայթող, ատղընտող քննութենէ անցնելու, մեղունները, թռչունները, թիթեռնիկները առանց իրենց թեւերը արիւնոտելու՝ չեն կրնար բնաւ մօտենալ այդ եղիւնի ծաղիկներուն, չեն կրնար յաւելտ անոնց հետ պագտուիլ:

Մանաւանդ սա կապոյտ մանիշակին նայէ՛. իր բովանդակ գեղեցկութիւնովը, իր բոլոր նուրբ թարմութիւնովը նայէ՛ ինչպէս մեղմ բարեպաշտութիւնով մը ոսկեգոյն թիթեռնիկն կը սպասէ ... օ՛ր, գուցէ այս երկու ծաղիկներուն թեւերը միասին պիտի տըժգունին, թարչամի՛ն, եւ կամ գուցէ այս երկու թիթեռնիկներուն թերթերը միատեղ պիտի խամբին, թօթափին ... :

Հապա սա միւս մանուշակը. կարծես սոխակի մը գերեզմանապահն է, դամբանախօսն է, ա՛յնքան մաքուր, ա՛յնքան արխուր երեւոյթ մը ունի ան: Ես այնպէս կը կարծեմ թէ, կանանչութիւնները այս փոքրիկ, անարգուած, անտեսուած լեռի մանուշակներուն ժպիտէն խաբուելով է որ կը բացուին, զեփիւռը անոր համար կը շնչէ, արեւը անոր համար միայն կը ծագի ու ան դարձեալ չի հպարտանար, կը խոնարհի:

Հաւատա՛, սիրելի՛ս, չի պիտի ըլլայ անգութ ձեռք մը որ առանց պատճառի, առանց արիւնոտելու եւ առանց պայքարելու կարենայ զանոնք քաղել, ժայռերէն, ապաւերներէն վեր մագլցիլ: Ահա, բոլոր ասոնց համար է որ այս պարկեշտ, դժուարահաճ, հաւատարիմ ու խոնարհ ծաղիկները կը սիրեմ, չա՛տ, խի՛ստ շատ կը սիրեմ ... :

Գիտեմ, կը զգամ, սա միջոցին շուրթներդ պրկեցիր, հիւանալի, արգահատելի շեշտով մը «թշուա՛ւ» կոչեցիր զիս. փոյթ չէ. դուն շատ լաւ գիտես թէ քու իւրաքանչիւր յանդիմանութենէդ՝ ես մասնաւոր հաճոյք մը կը զգամ ... :

Բարեկամդ՝
ԱՇՈՏ ՄԱՍԱԹԵԱՆՅ

Մ Ս Հ

Գարակէօզեան բարեհամբաւ գերդաստանէն դէմք մ'ալ կ'անհետի մահուամբ՝

ԱՅՐԻ ՏԻԿԻՆ ԷՖԹԻԿ ՊԱՍՏԱՃԵԱՆԻ

որ կնքեց իր մահկանացուն չորեքշաբթի գիշեր Բերա իր բնակարանին մէջ, չըջապատուած ընտանիքին անդամներէն:

Այրի Տիկին Էֆթիկ Պ. Պասմաճեան, մօրաքոյրն էր Ազն. Եղուարդ, Թագւոր, Արամ, Արշակ, Միհրան և Սարգիս Գարակէօզեան Էֆէնտիներու, և չօքանչը անուանի փաստաբան Ազն. Յակոբ Էֆէնտի Յակոբեանի:

Բարեպաշտուհի տիկինը հովանին էր կարծես Գարակէօզեան հարազատներուն, որոնց վրայ կը գուրգուրար և կը մխիթարուէր՝ ինքզինքը չըջապատուած տեսնելով իրեններով՝ որոնք այնքան կը սիրէին, այնքան հոգածութեամբ կը վերաբերուէին իրմով:

Յուզարկաւորութեան տխուր հանգէսը կատարուեցաւ Բերա, Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ մէջ, մեծ չքով և անօրինակ կարգ կանոնով:

Եկեղեցին լեցուն էր ընտրեալ բազմութեամբ մը, որոնք յաւարտ եկեղեցական արարողութեանց՝ իրենց ցաւակցութիւնը յայտնեցին Գարակէօզեան հարազատներուն, ուրկէ վերջ թափոր կաղմուելով՝ դադաղը առաջնորդուեցաւ Եկեղեցւոյ դուռը, ուրկէ մասնաւոր կառքով մը մարմինը փոխադրուեցաւ Շիշիի Ազգ. գերեզմանատունը ամփոփուելու համար ընտանիքին յատուկ դամբարանը:

«Հանրագիտակ» այս տխուր առթիւ իր խորին ցաւակցութիւնը կը յայտնէ Գարակէօզեան, Յակոբեան, Յընտղեան և Ճէվահիրճեան բարեհամբաւ գերդաստանին և պարագաներուն իրենց վիճակած այս ցաւառիթ սուգին առթիւ:

Բ Ա Ն Ա Ս Տ Ե Ղ Ծ Ն

(Գ)

Ե Բ

Կ Բ Ե Բ Գ

Առ. զքնաղագեղն ՌՌԶ

Չ Ա Ե Ռ

Զիւնն իր ձերմակ բանկակ պասսաւ
Երբ ֆոյ փոռ չեռ, ձոր, անսառ,
Վեսեան սիրոյդ սաք յիշատակ
Բոց կ'արծարծի իմ կոտործիս սակ:

Իմ կոտործիս սակ՝ ուր սերդ՝ երակ,
Կը խոխոցէ խանդի կրակ.
Ո՛չ ապաքեն վերմակն է ձիւն,
Ոյր սակ զարուստ երկնէն ցնծիւն:

Երկնէն ցնծիւն ցուրտ սիրակիս,
Սփոփեղու սրտու հոգիս.
Զիւն ու կարկուտ զիս՝ սերն հուր.
Որուն բով է աշխարհին հաւնուր:

Աշխարհին հաւնուր՝ ուր զաւ Բեզմէն,
Զ'ունին հեւայք դիմերն աւեւն.
Զեան մեղէն Ան ծաղիկ ծիւ,
Ու, մեղ մութիս, յոյսին հայքի,

Լոյսին հայքի, ուր զեղափարս
Փողփողաս ինձ ժպտուն նորհարս.
Վեւ, սեղ շնովդ եւ միշտ զոռոգ՝
Փեայք պարծիւն, չկաղդ իմ Ռոգ:

Զկնա՛ղդ իմ ՌՌԶ, իմ վարդ զոհար,
Երգն յար սոխակ Բե՛զ սիրահար,
Այցդ հոգոյս մեղ յուշն է անմեռ,
Այց՝ զոր տուր աչն խոր ձմեռ:

Այն խոր ձմեռ, ուր մարդ սառեր,
Զիւնն աչ կոպած ամեն դուռեր,
Դայք ու յովագ կ'ոռնար ֆաւին,
Ու զարհուրէր ամեն մարմին:

Ամեն մարմին՝ աչ ԴՌԻՆ եւեթ,
Կապարծի արկած Բոյդ սեքեւթ,
Լոկ վեշտասուն ֆու Մայիսեւթ
Ընկեր առած Բեզ անձնուր:

Բեզ անձնուր, անապաշտ,
Նժոյճ՝ եղնիկ, դուն կառարշտ,
Զիւն, բով ձեղնած սիրապատար,
Բաղկեղունէն միւնչ Իսկիսար:

Միւնչ Իսկիսարն Իմասիե,
Վեկիս հասար հեւն ի հեւե,
Ուր Աղունիսդ հայեր կարօս,
Բոց սերդ անոր հիւսեղ կարօս:
Հիւսեղ՝ կարօս հարս-փեւթ,
Զի՛ փոյք, մա՛րդ քե Աստուած սարսի,
Բա՛ւ քե, Ռո՛գդ իմ, Դուն վարդաբոյր,
Դեղ հասունցի ինձ ֆու համբոյր:
Ինձ Բու համբոյր՝ շո՛ւնչն ու անմահ.
Հոգի կալին եւ Եհովահ.
Համբոյրդ երգոց հոգի՝ հոսեւ,
Վիշտեռն՝ աչ՝ մեծ փանսահ՝ն:

Այն ձմեռնէն միւնչեւ ցայտօր՝
Ռ'րֆան տեսած ձիւն սար ու ձոր,
Իմ սիք բարւ բուրն զարձաւ զանաւ,
Եուրդ ուրիս մեղ աչ անբառաւ:

Նոյն դիմին աղբիկ կայտաւ, պայծառ.
Եւեղեւ սիրոյս նոյն վարդին ծառ,
Թե ցուրտ կայտեւն պահ մը ֆու զեղ
Պանե զայն շուտ սիւնն աչ շեղ:

Զայդ մ'է ձմեռ, ձիւնն աչ ձերմակ,
Վրայ նետուած բանկակ վերմակ,
Տիեզերին աչ խոց մ'ուր ֆու մահիճ,
Խորհրդանա՛յ սիրոյս դահիճ:

"յգն ահա՛, Ռո՛գ. բարձեղ մայիս
Նորագարուն ինձ կը կայիս,
Նո՛յն բոց աչքեր, նո՛յն կայտակ,
Բիքքդ հոն նո՛յն կոյսն ու հրշակ:

Սերդ աչ հոն նո՛յն երիտասարդ
Բիւր բոյրերով պակեղաբարդ,
Խայիկ մեկն նո՛յն պատշգամբէն
Նո՛յն շուքերուն ու դե՛մք ձմեռն:

Կ'աշեւորի մարդ, եւ Մեկա՛ր,
Բայց սիրն ու սեր չ'են ձերմաւ,
Հոգիքն են աչք մշտապակ
Հոգին, ո՛ր Ռոգ, չ'ունի հասակ:

ԻՄ ՕՐԱԳԻՐՍ

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ

Երկու շաբաթուան պարապուրդէս վերջէ, կ'արելի է եւ կամ կը կարծեմ թէ անհամբեր կ'սպասէք յօդուածիս, որուն մէջ գործածնիք շիտակ եւ à propos ըլլալուն համար շատերուն սանձի տալու առաւելութիւնը ունի:

Ուրեմն գրենք:

Հաւատացէ՛ք մինչեւ մօտ օրերս, ձեռքիս կամ մարմնոյս ո՛ր եւ է մէկ մասին փակշող շաբարէն կամ անուշին կը գանձի միայն, բայց հիմա ... գրականութենէն:

Օրաթերթ, հանդէս պարբերական, որ կ'ուզէք, ուշի ուշով կը հետեւի՞ք անոնց, կը կարդա՞ք վերը դրուած թուականէն մինչեւ Տէր-Տնօրէն ստորագրութիւնը: Ամբողջ խածխածուք, որ մենք կ'ինքնս ասղնտուկ կ'անուանենք, ան անով, աս ասով: Շուկացի արհեստաւորը տասնոցը կուտայ, եւ կ'ստիպուի կարդալու հայհոյանքէն չապիկ մը վեր ասացուածներ, որոնք գրագիրորէն շարադասուած ըլլալուն հայհոյանք չեն սեպուիր (° ° °): Զարգացած դասակարգը քառասունոցը կը ցնծայ, եւ փոխանակ գրական համադասներով ցնծալու ... ինքնագով կամ անամօթ բացատրութիւններու կը հանդիպի:

Հոս, բացարձակապէս կը խոստանամ, եթէ օր մը բաղդը այնքան ժպտի որ՝ շտաշէ՛ կլորիկ տղտուի մը տէրն ըլլամ, առաջին գործս ըլլայ համալսարան մը յիմնել, գիտէ՛ք որոնց ... խմբագրապետներուն, ուր կարենան սովորիլ յօդուածաւարտութիւնը, եւ որ աւելին է որոշ ուղղութեան մը հետեւելու ճամբան:

ԵՐԵՔՇԱԲԹԻ

Տարուան տասերկու քոյր ամիսներուն մէջ ներկայ Դեկտեմբերին, հոգի կուտամ եթէ կարելի ըլլայ ինքզինքս մեքսալոնֆօզ ընելու ըլլալ մանկապարտէզի վարժուհի, ծաղկոցի ուսուցչուհի, տնտեսուհի, հարուստ

երիտասարդի մը նշանածը, ունեւոր հօր մը աղջիկը, ընտանաւոր ամուսնոյ մը կինը, եւն. կաղանդչէքի սիրոյն, լոկ այդ առաւելութեան համար:

Վաղը տարեգլուխ է, բոլոր վերը թուած երջանիկ մահկանացուներս պիտի կաղանդուին, ամէնքը նուէրներ պիտի ստանան, պիտի հրճուին, պիտի խայտան, մինչ ես ... անպատճառ թերթիս Տնօրէն Վ. Փափագեանէն սա խնդրանքը պիտի ընդունիմ իբր նուէր կաղանդի:

— Օրիորդ, հաճեցէ՛ք տաք օրագիր մը հասցնել կաղանդի առթիւ ...:

Իբր թէ մինչեւ այսօր դրածներս պաղ ըլլային (pardon de l'expression):

Արդեօք ի՞նչ անո՛ւշ տպաւորութիւն մը կը թողու այն սիրուն թաւապատ տուփիկը, որ իր մէջ կը կրէ պոռոշ մը, կամ մատանի մը, եւ զոր կուգայ նուիրուիլ սիրակցորդ նշանածէ մը ...:

Եւ կամ ինչ ուրախառիթ պարագայ մ'է այն, երբ մինիկ թաթիկներ կուգան դրամական նուէրներ սահեցնել վարժուհիներու օր առաջ բացուած ափը ...:

And so for!

Իսկ ե՛ս ... անբաղդ աղջիկ, ծերուկ մօրկանս հետ մէկ մէկ տաք համբոյրներ պահած ունինք այս երջանիկ օրուան համար, համբոյրներ՝ որոնք մանեակներ, ապարանջաններ, աղամանդագօծ նուէրներ կ'արժեն, քանի որ ... անկեղծ են անոնք, ոչ իցոյցնա մարդկան:

ԶՈՐԵՔՇԱԲԹԻ

Ամէն կին կամ օրիորդ, իր սեռին յատուկ առաւելութիւնը պէտք է ունենայ, պէտք է յարգէ ինքզինքը, որպէս զի յարգուի ուրիշներէ: Կանացի փափկութիւնը — որ առաւելութիւն մըն է — պէտք է պահուի եւ փայփայուի մեր մէջ ... բան մը զոր կը տեսնեմ թէ կը պակսի մեր մէջ մանաւանդ գրականութեան մէջ:

Գրականութիւնը որ ասկէ տարիներ առաջ մեր հակառակ սեռին մօծօքոյն էր, ուրախ եմ տեսնելով որ առհասարակ կը մշակուի հիմա մեր կողմէն: Բայց ցաւալի է յի-

չել թէ կան՝ որոնք պատշաճութեան սահմանը կ'անցնեն, ընտրելով նիւթեր՝ որոնք չեն պատշաճիր եւ կամ մեզ անկ չէ գրաւիլ անոնցմով:

Ի մէջ այլոց յիշենք հոս Օրագիր մը, որ միշտ օրուան գրողներու դարպաս կ'ընէ (որ թարգմանի պոչ խաղցնել) ձաղկել կը փորձէ, եւ կը յանդգնի վիճաբանիլ այդ գրողներու հետ... Իբր թէ երգիծական ոճով: Ե. Ե.:

ՀԻՆԳԵԱՅԹԻ

Շատ անգամ հանդիպած եմ մայրերու, որոնք կը գանգատին իրենց աղջիկներուն համար, առարկելով թէ՛ վսխկոտ են, այսինքն, երբ գիշեր ատեն վերի սենեակէն առարկայ մը բերել հարկ ըլլայ, կը դժկամակին ու վախի պատրուակին տակ չեն ուզեր ելեւէջել սանդուխները գիշերուան մութին կամ առանձնութեան մէջ:

Օրիորդներու համար յարուցուած այս ջղային խնդիրը չեմ հասկնար եւ չեմ կըրնար ընդունիլ: Երբէ՛ք:

Ամէն բան վարժութեամբ ձեռք կը բերուի, այս կարգէն է նաեւ վախը: Բայց կը հարցնեմ իմ ջղային քոյրերուս, դիցուք թէ սալօնի մը մէջ երիտասարդի մը հետ ալ մինակ գտնուին, նոյն ջղային ցնցումը կունենան արդեօք: Եւ կամ փողոց ելած միջոցին, երբ անծանօթ թէ ծանօթ դէմքերու կը հանդիպին, նոյնչափ վախ կզգա՞ն արդեօք, թէ ոչ, ֆիզիքական այծերին կ'աւելնայ եւ համարձակութիւնը կ'ունենան թեթեւ ժպիտներ, նայուածքներ փոխանակելու անոնց հետ...:

Հստ իս, գիշերուան կիսուն, առանց աշտանակի տանը չորրորդ յարկը ելալը շատ աւելի անվտանգ է եւ ապահով, քան թէ սալօնի մը մէջ գտնուիլը երիտասարդի մը հետ ցերեկուան արեւին:

Ահա իմ կարծիքս, որ կարծեմ թէ չիտակ է:

ՈՒՐԱԿ

Թէեւ քիչ մը ուշ, սակայն կ'արժէ որ երկու խօսք ալ Ֆրանսիական նուագահանդէսին նուիրենք:

Concert par-ci concert par là, այսպէս էր նուագահանդէսէն առաջ: Կարծես tout Pérà, հանդէսը պիտի լեցուէր, գէթ այնպէս կը

կարծուէր, այնքան աղմուկ, այնքան պատրաստակամութիւն կար վայելելու այդ ճնշակաւ ցերեկոյթը:

Տիար Ֆրանսիական իր ձայնէն աւելի առգանութեանը կ'ապաւիներ, բան մը որ չեղաւած էր օրաթերթերու ռեֆրաններուն մէջ: Բառերուն ծայրի ե միւսն որոշ հնչելուն համար թերեւս...:

Հստ իս, բուն թառիգիկն մը նոյնքան չպիտի երկարեր այդ գիրը՝ որչափ կ'երկարէ թեալիկները:

Enfin մինչ այս մինչ այն, պէտք է ըսել թէ ներկաներէն մեծ մասը միւսիւ Հէկէն լսելու համար քառորդ ոսկին աչքէ հանեց, ինչպէս կ'ընէ ամէն տարի Հիւանդանոցի նուագահանդէսին, որովհետեւ այդ արուեստագէտը ինքնին փայլուն ծածկոցն է ցերեկոյթներու, որ կուգայ ծածկել, սքողել ամբողջութիւնը:

Որչափ ուրախ պիտի ըլլամ սակայն երբ ուրիշ նմանօրինակ առիթներու մէջ պատուը ունենամ տեսնելու sale complet, այսինքն գեղարուեստի ճաշակը ընդհանրացած մեր մէջ, որով միայն կարելի է լեցուն տեսնել սրահը:

Հոս պէ՛տք է աւելցնել արդեօք թէ՛ նախ պէտք է գանկերը լեցնենք... յետոյ սրահները:

ԵԱԲԱԹ

— Չարը բարիքով յաղթելը, կինը համբոյրով զսպելուն կը նմանի:

— Ամէն կին քիչ շատ գեղեցկութիւն մը կ'ունենայ, բայց բնոյթի գեղեցկութիւն... շատ քիչեր:

— Ս. Պսակի խորհուրդը այն մոգական դուռն է, ուրկէ անցնողը դուրս ելալ կ'ուզէ, մինչ դուրսը մնացող ներս մտնալ:

— Կինը սիրամարգն է, բնութիւնը ոտքերը: Անոր փետուրներէն մի շնանք... մի խարուիք... ոտքերուն նայեցէք:

ԿԻՐԱԿԻ

Նիւնիս կաղանդէք քթախտի տուփիկ մը գնելու համար դուրս ելալու ստիպուած եմ... Mille pardons!

ՊԵՆԴՐԻՍ ՇԱՀԻՆԵԱՆ

ԱԿԱՍԱՅ ԳՆԱՅՔ

Պիսի քողուս որ ծիրիւն եւ քու սիրովդ,
Սիրով մը՝ որ երբեք չ'ունի հանգրուան:
Այս երգերն ալ պիտի ըլլան օր մը քովդ,
Յիշատակն հեզ՝ սիրահարի մ'անկեկոյն:

Ապագայիս հեռանկարն ալ հիմալ,
Կը քայքայուի, չոկ քու սիրոյդ երեսէն.
Սեւ օր ըլլար չի սիրեի քեզ, ահա՛
Կը զոջամ ես, ու կը խորշիւն այդ սերէն:

Բայց ի՞նչ քաղուն ուժ է որ զիս չի քողուր՝
Եւ դառնալու աննպաստ ալ այդ ճամբէն,
Ճամբայ մը որ զիս կը քանի մահուան դուռ.
Հո՛ն՝ որ մարդիկ երջանկութիւն կ'երագեն:

Գիտակցութեամբ մեռնիլն ալ շա՛ս դժուար է.
Կեանքն չի վայրած, չի յափուցած դե՛ռ անկէ,
Հեռանալ սոսկ մեկուն համար որ չ'զգար,
Ձի գիտէր յարգն սիրողի մը՝ վշտահար:

ՍՏԵՓԱՆ ԽԱՉՈՒՆԻ

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Ռոստոյ — Ստացանք տարեկան բաժ-
նեգինը 54 զրէ: Անոնք որ կ'ուզեն թերթ
ստանալ՝ առանց կանխիկ վճարման, չենք
կրնար օտարեր կարգադրութիւն մը ընել:

Իզմիս — Կը խնդրենք տեղւոյդ մեր
բաժանորդներէն մինչեւ ամսոյս քսանը վը-
ճարել իրենց պարտքը:

Ռուսմոյ — Ստացանք 12 ֆրանքը:



ՔԱՂԱՔԱՎԱՐՈՒԹԻՒՆ

ՈՒ

ՆՈՐ ԿԵՆՑԱՂԱԳԻՏՈՒԹԻՒՆ

Սորունջու համար ճանչնալ ու գործադ-
րել աշխարհին քոյր սովորութիւնները,
եւ վարուիլ անոնցմով՝ հասարակաց բարե-
վայելչութեան համեմատ, կեանքին զիսաւոր
ու սկզբնական պարագաներուն մէջ:

— — — — —

Ա.

ԸՆՏԱՆԻՔՆ ԻՐ ՏԱՆ ՄԷՋ

ՀԱՄԱՐԱԻԸ ԿԱՄ ԲԱՐԻ ԱՆՈՒՆ

Համբաւն է այն աղէկ կամ գէշ անունը,
այն յարգանքը, կարծիքը զոր հանրութիւ-
նը կը կազմէ ո եւ է անձի մը մասին:

Կը պատահի երբեմն որ պարկեշտ մար-
դերն են անոնք՝ որոնց անունն ու համբաւն
աժէնէ աւելի չարախօսութեանց, զրպար-
տութեանց ծաղր ու ծանակ կը դառնայ:

Ո՛չ ապաքէն ալ կ'տեսնենք ընդհանրա-
պէս թէ՛ ամենէ ազնիւ ու ընտիր պատուներն
են անոնք զոր կ'կոչեն թռչունները եւ զոր
կ'հրձեն որդերը:

Աշխարհին սովորութեամբն ու յարաբե-
րութեանց ընտրութեամբն է որ կ'շինուի
կ'ստեղծուի բարի համբաւ մը, բարի անուն
մը:

« Ըսէք ինձ թէ որո՞ց քով կ'յաճախէք.
եւ Ձեզ պիտի ըսեմ թէ ո՞վ էք »: առած
մ'է որ միշտ իրաւունք ունի:

Ուրեմն շատ բարձր ու շատ մեծ կարե-
ւորութիւն ունի, պարկեշտ մարդերու եւ
բարեկիրթ անձերու հետ տեսնուիլը:

Ոչ ինչ աւելի գուրգուրալի, ոչ ինչ ա-
ւելի դիւրաբեկ, որքան կիներուն համբաւը,
հեղինակ մ'ըսած է. « Կնոջ համբաւը նման
է հայելիին, զոր շունչ մը կ'զուլնատէ »:

Թող կին մը հսկէ ուրեմն պահել ու
չաղարտել իր համբաւը. կինն զգուշանալու
է ուրեմն ո՛չ միմիայն գործելէ կամ ունե-
նալէ այնպիսի տկարութիւններ որ զինքն
այլոց պարսաւելի պիտի ընեն, այլ զգուշա-

նալու է նաեւ ծայր աստիճան հոգածութեամբ այն ամէն բանէ, որ կրնայ իրեն աննպաստ դոյզն լինելու թիւն մը պատճառել:

ԱԶԳԱԿՑԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հայրերու, մայրերու, զաւակներու, ազգականներու ու բարեկամներու միջեւ եղած պարտականութիւններն են, որ կ'կազմեն ազգակցական յարաբերութեանց չիմն ու խարխիւր:

Այս պարտականութիւններն յաջորդ յօդուածին մէջ կ'նշանակուին: Կան ուրիշ պարտքեր ու որ հասարակաց բարեկալայելութեան մասը կ'կազմեն:

Բացի ամէնօրեայ յարգանքներէն զոր պարտինք չուայել մեր ծնողաց ու ազգականաց, կան ուրիշներ ալ. որոնց չարժանութիւն ըմբռնելու է մեր սեռը:

Օրինակի համար, կան ինչ ինչ ատեններ, որոնցմէ մին է նոր տարուոյս գալուստը, պարտինք անոնց ընծայել մեր խանդաղատանքն, մեր գորովանաց ու մեր բարեկամութեան ապացոյցներն ու հաւաստիները:

Անկէ ծագում կ'առնէ սովորութիւնը. Առաջին՝ նոր տարի ու բարի կաղանդ մաղթելու նամակներուն, որ մեր ծնողաց ու բարեկամաց նկատմամբ տածած զգացմանց բացատրութիւններն են: Երկրորդ՝ պատուասիրութեան, մեծարանքի, տարեղարձներու, շնորհաւորական նամակներուն, որ մեր խնդակցութեանց հաւաստիներն են զորս կ'արտայայտենք թէ անոնց զոր կ'սիրենք, կ'յարգենք ու թէ անոնց որոնցմէ կ'չահաւորուինք, կ'օգտուինք:

Ամաղարձներու, տարեգլխի շնորհաւորական յարգանքները սովորական են միշտ ամէն տեղ, եւ ընկերութեան ամէն դասակարգերուն մէջ, նամանաւանդ այս սովորութեան ամենէ աւելի արտայայտիչ ձեւն է զոր կարենաին գործածել երախտագիտութիւնն ու քաղաքավարութիւնը կենցաղագիտութիւնն ընդհանուր համար հոգւոյն զգացումները:

Պատուասիրական զգացումներն յայտնելու այս սովորութիւնը կ'ընծայեն մանկուոյն:

Երիտասարդաց տօնախմբութիւնները ներբողանքով հռչակելու հաճելի ու քաղցր միջոցները, դիւրացնելով անոնց ստիպեալ պարտականութեան մը կատարումը:

Տղուն համար՝ որ կ'մեծնայ, աղջկան մը համար՝ որ կ'խորհի, բարեկամական, գոյովական, բարոյական նամակները, կ'ծնուցանեն անոնց սրտերուն մէջ, բարձր ու լուրջ զգացումներով լեցուն մտածումներ, կ'նըպաստեն անոնց խելամուտ ըլլալու, իրենց պարտականութեանց ու զանոնք լաւ ըմբռնելու, հասկնալու, կ'օգնեն սիրելու Աստուածը, եւ իրենց սրտին զգացումներն արտայայտելու:

Սովորութիւնը նախապատիւ ընտրուած է դուռուել (tutoyer) իր հայրն ու իր մայրը, այսինքն դուռով խօսիլ ու գրել իր ծնողաց, քան թէ դուռ գործածելով: Մեծ վստահութեան մը, սիրուն անխնամութեան այս ընտիր ու ազնիւ սովորութիւնը երբէք վիրաւորիչ ընտանութեան մը յանգեցնելու, զայս չարաչար գործածելու չէ:

Փոքրիկ նուէրներ, ծնողաց ու ազգականաց մէջ, սիրոյ անոյշ կապ մ'աւելի կ'կազմեն: Պէտք է որ ընծան ըլլայ անկեղծ, երբէք կեղծաւորական. սիրուած անձի մը նուիրելու դիտում վ մարգագետնէն քաղուած փունջ մը հաւաստի է վաճառականութեան մէջ գտնուած ամենէ աւելի հարուստ ու թանկագին առարկաներու:

(Շարունակելի)

ՖԻՄԻ ՇԻՐԻՆԵԱՆ

Դասարանին մէջ ճնօրէնը կը հարցունէ գիշերօթիկ աշակերտի մը.

Վարժին յոգնակին ի՞նչ կ'ըլլայ, աղա՛ս:


— Վարունգ:

— Ինչո՞ւ, կը հարցնէ տնօրէնը բարկացած:

— Որովհետեւ երէկ վարքս չատաղէկ էր, փոխանակ ելակի՝ վարունգ տուիք ինծի սեղանին վրայ:

ԿԱՐԵԿՑԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

(ԹԷ ԻՆՉԵՐ Կ'ԸՍԵՄ ՆԱԴԱԴԻՍ)



Ես ինքս անմորուս քահա-
նայ, — վկայ ստորագրութիւ-
նըս, — կնո՛ղ դէմ սատանայ,
չնորհօքն խելպատուկիս, եւ օ-
ժանդակութեամբն ամենայն
փորձառութեանցս, խելքովս,
մտքովս, ձեռքովս, ոտքովս, աչքովս, քի-
թովս, պկանջովս, բերնովս, լեզուովս, վեր-
ջապէս ցից մագերէս մինչեւ թըռնախ պալթ-
տըըր ոտնարթամատներս, կուգաս արժա-
նաբար կարդալ խրատական քեզի՛, ո՛վ
Եւայի թողան, թողան, թողան, թողան,
թողան, թողան, թողան, թողան, թողան,
թողան, թողան, թողան . . . թողնորդի,
որպէս զի գիտնաս ինք՝ինքդ, ճանչնաս բա-
րին ու չարը, ինչպէս նաեւ միւսիւ. Բար-
սեղը, որուն համար գիտեմ թէ հացը չրթրոյ
կուտես, ժառըթիէններդ վարէն կը դնես,
եւ . . . լուսէ լուս կը քնանաս, այնքան կը
սիրես, կը հայիս, կը մոռնիս իրեն համար:

Լինի, աղջիկս, առ քէմէնէդ ձի ոքդ, ա-
նուշ Թէոէլլամ մը ըրէ, որպէս զի սկսիմ
խրատողական :

Զբեց կը ճանչնամ, այն ատենէն՝ երբ
կարճ թիւսան կը հագնէիր, զլուխդ քարիշոն
կը դնէիր, ու ցերեկուան ճաշի սիթիլըդ մոռ
քաթլիճան կտրած ձեռքիդ մէջ բռնած՝ վար-
պետ առատու կերթայիր, տանիքներէն կաթ-
կըթող ջուրի կաթիլներուն տակ մուկ կըտ-
րած :

Այն ատենէն, լաւ կը յիշեմ, փափաք
ունէիր երկայն ֆիստան հագնելու, զլուխդ
պսակ՝ ու թեւդ ամուսին մը ունենալու, եւ
ասոր հազէտէն կիրակիները, մամայիդ բա-
ցակալութեանը, անոր պսակին ֆիստպնը
սնտուկէն հանելով կոնակդ կ'անցընէիր, զը-
լուխդ թուղթէ պսակ մը կ'ղնէիր, եւ
կուրծքիդ ալ, խոհանոցէն թէրէօթ մալտա-

Նոսր պուրֆ մը կը զետեղէիր, եւ այսպէս
հայելիին մէջ նայելով՝ ինքնիր զլսուող հարս
կ'ըլլայիր, այնքան փափաքող էր այդ փառ-
քին տիրանալու :

Հայրիկին անունին գիշերը տունը՝ լեցուող հիւր երիտասարդներուն հանգէպ, մերթ կը ճերմկնայիր, ու մերթ խալիկ կարմիր մը կը պատէր այտերդ, ու պաղ քլուտինք մը վեր սօթթուած մազերուդ արմատները կը թըր-
ջէր:

Կզգայիր, կիմանայիր, եւ կը փափաքէիր, անոնց հետ երկու խօսք փոխանակել, մինչ անոնք մեծ քոյրերուն հետ վալս կը դառնա- յին ... անտեղեակ: Քոյրերուդ վիճակին ախր կը քաշէիր, եւ քանի քանի անգամներ անոնց երկարածիգ բէչերուն վրայ կը կոխէ- իր, որպէս զի կարելու համար սենեակէն րացակայ գտնուին անոնք, ու դուն remplace- րնես զանոնք ... խելքսլորդ ...:

Երիտասարդներէն մին՝ երբ Նինի . . . ըսելով խնդում երես քովդ գար, իսկոյն սարսուռ մը կ'անցնէր երակներէդ, կարծելով թէ՛ բօլբայի անկաթէ պլտի ընեն զքեզ, մինչ՝

— Սըտեղէն ինծի ջո՛ւր մը բեր ... ա-
մա մաքուր ըլլայ ... մը կ'ըսէր, ու դէմքիդ
ուրախութեան կարմիրը՝ մեղրամոմի ճերմա-
կին կը փոխուէր, եւ գիտեմ թէ բարկու-
թիւնդ առնելու համար, դուրսի մոռսյուխէն
լեցնելով կը հրամայէիր ... , որ կռութ
կռութ կը խմէր աւանակը, դուրսէն շոգիա-
ցած մարմնոյն հուրքը առնելու համար:

Այսպիս, Նինիա, դուռն քեզմով կ'անցնէիր
այն բեռնօտը, որ կը հալեցնէ աղջիկները
ալդ տարիքին :

Ինչ դժուար բան, հէ՛, Նինի՞ս... զգալ,
եւ փոխադարձ ակնարկի մ'իսկ չարժանա-
նայ:

Մանչերը օրը ցորեն մը, իսկ աղջկները
օրը դարձիկ չափ կը մեծնան, կ'ըսեն մամիկ-
ները, ահա դուռն ալ շուտ մեծցար, եկար
հասար ... եւ ցաւալի է ըսել թէ ... ան-
ցա՛ր ալ :

Այն տղու փափաքներդ, որոնց իրականութիւնը հասուն հասակիդ մէջ վայելել կ'երազէիր ... անցուկիդ մէջ իսկ չի կրցար տեսնել, վա՛խ ... :

Գիտե՞ս ինչու ... :

Ներէ՛ս ր ըսեմ:

Այն օրէն, երբ հայրիկը անվճարէ, անդրաշխարհային նամակատուփը ձգեցին, անկէ վերջ տունը նայուելու եւ ձեր ապրուստը ապահովելու համար մայրիկը զքեզ աչքը առաւ: Ժամանակէն առաջ քեզի երկայն ֆիստան հագցուց, մազերդ վեր սոթթեց, երեւո՞ր բուռաւ, աչքերուդ ալ սրւրմէ քաշել տուաւ: Դպրոցականի մը թեւին պայուսակին պէս քեզի հետն առած, աս եկեղեցի է, ըսաւ դուրս հանեց, աս սուռահէ է ըսաւ հետ տարաւ, աս անուան տօնախմբութիւն է, ըսաւ քեզ հոն նետեց, աս պըտոյտ է ըսաւ փողոցները պարտէզները ցուցադրեց, որպէս զի իբր հասուկ աղջիկ մէկուն գլուխը հանէր, տուն փետայ մը ճարէր, եւ այսպէսով հայրիկին տեղը լեցնէր, որ թարգմանի տունը տեղը նայել տալ:

Դուն, Նինի՛ս, դժբա՛ղդ աղջիկ, ինչպէս առաջուց կը փափաքէիր, երես առնելով մայրիկին այս թոյլտուութենէն, բացուեցար, այնքան, որչափ չեն բացուիր ... լալէսիները:

Համարձակութիւնդ մէկ կողմէն, գեղեցկութիւնդ միւս կողմէն, ինչպէս նաեւ մայրիկիդ թոյլտուութիւնը, ասոնք բոլորը մէկ՝ զքեզ բերին այն վիճակին, ուր մանկամարդ որբ եւ այրի մը անգամ չի կրնար ունենալ:

Եւ կը յիշե՞ս ... սուռահէի մը մէջ, զքեզ մանչ-աղջիկ անունով մկրտեցին, ու բարկութենէդ փառնիլին ոտը կիսատ ձգելով մութ սենեակ մը փախար, ուր գինով երիտասարդ մը կը խռկար անկիւնը, եւ վերջէ՛ն ... :

Ինչ եւ է, մտիկ ըրէ որ թուեմ այն բոլոր անպատեհութիւնները, որոնք պատճառեղան քու ամուրի վիճակիդ մէջ ձերմակ մագերով պսակելու գլուխդ:

Մինչեւ հիմա թուեցի քու բոլոր դժբաղդութիւններդ, հիմա պիտի թուեմ այն պատճառները, որոնց երեսէն դեռ կառսօնեզլսարկ կը դնես, ու հասցէիդ եկած նա-

մակներուն գլուխը՝ Օրիորդ անտանելի եւ ջիզասարսուռ բառը կը կենայ ... բան մը ուրկէ խուսափիլ կուզես ազատի՛լ, թօթափի՛լ:

Նինիս, անուշ աղջիկս, կը յիշե՞ս միւսիւ Ե.ը, եթէ չես յիշեր դաշնակին վրայ նայէ, նօթերուդ մէջ անդ մը դրած պիտի ըլլաս պատկերը անպատճառ: Դուն չէիր որ, հակառակ անոր ասոր խրատին, ետեւէն ինկար, մաղաղան գացիր, ճամբան կտրեցիր, ու գանձանակդ կտրեցիր, մէջի մանրուքներովը պախալի չրախներուն postierի պաշտօնը կատարել տալու համար նամակներուդ որոնց վերջը չէր ի գար՝ Ապրիլի անձրեւներուն պէս:

Ան ի՞նչ ըրաւ:

Բոլոր գրածներդ քաղինօներու, սրճարաններու եւ պարտէզներու մէջ իր ընկերներուն կարգաց, խնդաց եւ խնդացուց քու վրադ, ծաղու առարկայ ըրաւ այն բոլոր գրութիւններդ, որոնց մէջ սրտէդ խօսած էիր:

Այս կարգէն է նաեւ միւսիւ Ա.ը, յիշելու ես աս ալ, որուն դուն խօսք բացիր, մագուռքայի միջոցին, անոր ականջն ի վար déclaration մը ընելով:

Տղան կարմրեցաւ, ձերմկեցաւ ու դողաց, ականջը խտխտացնող այդ խօսքերէն ազդուած, մինչ դուն ամբիժ տատրակ մը գտած ըլլալու սին ու պատիր յուսով, քուկդ կարծեցիր այդ պատուօր, ինքնիրենդ նախանձի խտխտուկներ յարուցիր մէջդ: Օրերով ետեւէն ինկար, պատուհաններէն վար կախուած խօսքեր նետեցիր, վերջապէս տղուն ներսը թմրած օձը արթնցուցիր, Նինիս, ու ալ ճարահատ տղան ափդ ինկաւ:

Բայց ի վերջոյ, կուզե՞ս յիշել տամ քեզ արդիւնքը: Չըլլալիք մայրը ինչ ըսաւ երբ կէս գիշերուն տուն եկաւ, ուր հիւրերով լեցուն էր ձեր սենեակը:

— Աս էտէպսիզ աղջիկդ զապդ ըրէ, տղաս ճալկոզտելու է ելեր չունը ... :

Ի՞նչ եղար այդ միջոցին ... կը յիշե՞ս, երբ վրադ մարելիք եկաւ, եւ ընկերուհիներդ ֆոնտայներով, o sra ֆօյօներներով հազիւ կրցան խելքդ դուխդ բերել, եւ ուխտեցիր, ատանկ խելզներու սիրտ չի տալ

այլեւս, եւ զգուշանալ տարիքէդ վար, շատ վար երիտասարդներու խելք չի դնել:

Դեռ կան, եթէ կ'ուզես պատահար մ'ալ, եւ վերջացնեմ:

Միւսիւ Լ.ը, հարկաւ միտքդ է, ան որ քեզ խայտառակեց:

Դուն չէի՞ր նախապէս անոր ետեւէն իյնողը. զայն իրր֊տիպար երիտասարդ ճանչցողը:

Խեղճ աղջիկ ... կը կարեկցիմ հաւատացէք, կը ցաւիմ ձեր օրուան վիճակին վերայ, բայց ձեռքէս ի՞նչ կուգայ ...:

Ահա քու կեանքդ իր դրուագներով:

Յաջողեցար: Ձեմ կարծեր Նինիս, քանի որ քու ընկերուհիներդ թուան տէր եղան, եւ դուն դեռ ամուրի վիճակիդ մէջ կ'օրօրուիս, չի խնայելով դէմքիդ բուտռան, մազիդ ներկը, բաներ, որոնք ցոյց կուտան քեզ թերեւս օր մը հասցնելու համար պէեզ քու խտէալիդ, որ սնդիկի կաթիլի մը պէս կը գալարի կը խուսափի ձեռքէդ ...:

Թերեւս ուրիշ մը իմ տեզս, խղճար, ու ցաւեր քու ներկայ վիճակիդ վրայ, բայց ես ընդհակառը կուրախանում, մտածելով որ քու անցեալ կեանքդ օրինակ մը պիտի ըլլայ քու նմաններուդ, եւ անոնք ալ ինքզինքնին պիտի ուղղեն, պիտի գիտնան թէ այդ կեանքը, այդ ճամբան սխալ է եւ անել:

Հասուն հասակդ նոր թեւակոխած, աչքերդ երիտասարդի էր, վառվառն տղայ մը կուզէիր ընտրել կեանքի ընկերդ, քիչ մը տարիքդ լենալուն, գործի մարդ մը փափաքեցար ձեռք ձգել, աշխատող, վաստակող, որովհետեւ այդ տարիքիդ մէջ հասկըցար թէ, դրամը առաջին առաւելութիւնն է ամուսնական կեանքի մէջ, եւ ոչ թէ վեց ոտք վալսը:

Ու հիմա, քթան պէխերով յիստուննոցի մ'ալ կը զիջնիս, բայց ... չի գտնուիր, ու չի կրնար գտնուիլ. քանի որ մեր մէջ սովորութիւն է, էրիկմարդուն տարիքը չեն նայիր, բայց աղջկան մազերուն մէջ ճերմակը կը համրեն:

Նինիս, կտրէ յոյսդ անուշըս, համազուէ թէ ամուսնական կեանքը իր երկաթ դըռ-

ները գոցած է ալ երեսիդ, ու ալ մի սլքտըկար:

Քաշուէ ընկերական կեանքէն, շատերուն մ'երեւար, կոկիկ հագուէ, մաքուր հագուէ, բայց ալ պէնի թուալթէն հրաժարէ ալ, մեղքնալով քսակդ, քանի որ օգուտ մը չունին անոնք, ոչ գունաւոր ժապաւէնները, ոչ ալ էքսթռէներու բուրումը: Եթէ նոյն իսկ չիշ մը ժաւմէն պլան ալ թափես վրադ, օրուան երիտասարդները, հողի մահահոտ բոյրը պիտի համարեն ու պիտի փախչին մօտէդ:

Երբ ընտանեկան երեկոյթի մը հրաւիրեն, լաւ կ'ընես եթէ մերժես: Այդ եռուզեռ տաք մթնոլորտը, սիրտդ պիտի սեղմէ ու արգիլէ շնչառութիւնդ: Երիտասարդներու խօլ պարը դիտելուդ՝ անցեալդ պիտի յիշես, եւ երբ ներս մտնալդ մինչեւ դուրս ելլալդ՝ ճանճի մը անգամ վրադ չի թառել տեսնես ջիղերդ պիտի գրգռուին եւ պիտի զղջաս հոն գտնուելուդ:

Քու տարիքդ աղջիկները, պէտք է ինքզինքնին բարեգործութեան տան, աղօթեն, եւ առ տնին զբաղումներ ստեղծեն մոռնալու համար իրենց վիճակը:

Լաւ կեր, սիրէ պտուղները, զգուշացիր ալքօլ գործածելէ, եւ բնաւ մի մտածեր ... խղզ խռռուսի մնալուդ վրայ:

Աչքիդ դէմ տատրակներու պէս զոյգ զոյգ շրջագայող նորապսակ ամուսնորու դէմ՝ մի՛ գէշ անցներ միտքէդ, աղօթէ անոնց համար, անոնց երջանկութեանը նախասնձախընդիր եղիր միշտ:

Եթէ պատեհութիւն ունենաս սոսակցելու քու կէս տարիքդ ունեցող օրորդներու հետ տեսնուէ, եւ անոնց բարոյախօսը եղիր, գիտցուր անոնց թէ թեթեւութիւնը, տարպասը կուտ մը չեն արժեր ամուսնութեան մէջ յաջողելու համար ...:

Երբ եկեղեցի երթաս. ետեւօք կեցիր, սրտանց աղօթէ ... անցեալ մեղքերուդ քաւութեան համար, եւ պնակ պաւտցնող երիտասարդներուն երեսը մի նայիր...բայց տաւնոցդ ալ մի՛ խնայեր, որովհետեւ այդպէսով վրէժդ չես կրնար առնել:

Սէր տուր բասեանսին, օրուան պարապ

ժամերդ անով անցուր, ան քեզ պիտի մը-
խիթարէ:

Փողոց ելած ատենդ աչքառու թուալէթ
մի ընէր, լճոնի կեղեւի կը բռնուիս, բեշե-
րըդ շատ վեր մ'առնէր, հոգ չէ թէ անոնք
ցեխոտին ... պարզ խօզանակ մը կրնայ
մաքրել զանոնք, բայց հակառակ պարագա-
յին դիտողին գաղափարը չի մաքրուիր:

Նինիս, գիտեմ այս խրատներս քեզի
ծանր պիտի գան, պիտի անիծես զիս, բը-
զըքտելդ պիտի գայ, պիտի փրփրիս օճառի
պէս, սակայն աս աս է, քու ձեռքովդ ըրիր
ես յանցանք չունիմ:

Պահէ այս նամակս, ինչպէս կը պահէիր
ատեն մը քիթիդ խնդացող միւսիւններու
կեղծ ու պատիր գրութիւնները, բայց ա-
սիկայ վէտ կախէ եւ չարաթը անգամ մը
կարգայ: Լաւ է որ գոց ընես, բայց չեմ
գիտեր թէ ... խելք մնացած է գլուխդ ...:

Վախ Նինիս ...:

Անկեղծ բարեկամդ

ՎԱՀԱՆ ՓԱՓԱՋԱՆ

XXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXXX

ՄԱՐԳԱՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

ՀԱՅՏԱՏԵԱԼ 1805

Կ. Պոլիս, Մերձան փողոց, թիւ 57

Օսմանեան Պատմութիւն մինչեւ մեր օ-
րերը Մ. Աշճեան Ղրջ. 4

Գոհարմասեանի, երկուսն վարժարան-
ներու ուսումնական ընթերցման արժանի
լաւագոյն դասագիրքը Ղրջ. 5

Զրուցասրահան Ընթերցարան. տարրա-
կան կարգերու. իր տեսակին մէջ բազմաթիւ
նոր Ղրջ. 3

Մանկավարժական Քերականութիւն. Գ.
մաս. պատկերներու վրայ իր աննման ոճով
կը սորվեցնէ Հայերէն. Քերականութիւնը
Ղրջ. 4

Հայերէն Լեզու կամ Վարժութիւն Գրա-
քարի, կ'ուսուցանէ գրաբարը հասկնալ ու
թարգմանել, առանց հոլովները ու բայերը
ի բերան սովորեցնելու: Ղրջ. 4

ԿՍՐՃ միջոցի մէջ Անգլիերէն կամ Յը-
րանսերէն սովորել փափաքողներու միակ
գիրքը ՄԱՅՍԹԻՐՍԵԱՖԹ ՍԻՍԹԵՄ. 15
տեսարներու գինը Ղրջ. 30

Առողջապահական Մարմնամարզութիւն.
54 պատկերով, առանց գործիքի. ամէն
տուն պէտք է ունենայ այս գիրքէն Ղրջ. 5:

ԿԸ ՄՏԱԾԵՆ

Ամէն մարդ մէկ մէկ բան կը մտածէ, եւ
չեմ գիտեր թէ կա՞յ այսօր ո՞ր եւ է անհատ
մը՝ որ գերծ մնացած ըլլայ ա՛յդ տաղտու-
կէն:

Պէտք է ընդունիլ սակայն միեւնոյն ա-
տեն ալ թէ՛ մտածումները յաճախ տարօ-
րինակ, զարմանալի կ'ըլլան, մինչեւ իրենց
ծնունդ տուող անհատականութիւնները բը-
նորոշելու, անոնց ինքնութիւնը երեւան
բերելու աստիճան այլազունակ ու տարբեր,
բա՛ն մը՝ որուն բազմաթիւ օրինակները հոս
մէջ բերելը դժուար բան մը չէ՝ ապահովա-
բար:

Պարտատէրներ կան, որոնք շարունակա-
բար ամէն օր կը մտածեն թէ ի՞նչպէս պի-
տի կրնան փախուստի հնարքներ որոնել ի-
րենց առնելիք որոնք ձեռքէն պրծելու
համար, եւ առ այս շատ անգամ հնարքներ
ալ կը գործադրեն, ա՛յնպիսի ինքնատիպ
հնարագիտութիւններ՝ որոնք ինքնին կարող
են ստուեր ածել ամենէ՛ն համբաւեալ եւ
ամենէն ճարպիկ աչք-բացութիւններու վրայ:

Իրենք՝ պարտատէրները կը մտածեն թէ՛
ճամբան գացած ատեն եւ կամ թէ ո՞ր եւ է
ընտանեկան հաւաքոյթի մը մէջ կրնայ ըլ-
լալ որ — տարօրինակ դիպում — մէկէն
ի մէկ պատահին իրենց պարտապահաճին,
բայց ա՛յս ալ հոգ չէ՛, քանի որ իրենք մի-
եւնոյն ատեն առանց ո՞ր եւ է ընկրկումի՝ ի-
րենց կողմնակի գրպանէն պզտիկ սրուակ
մը հանելով, կրնան ըսել անոր.

— Նայէ՛ սըւոր, եղբայր, երկու չարա-
թէ ի վեր պառկած էի անկողնիս, եւ տա-
կալին այսօր վեր ելայ ... մէջ մըն ալ չե՛ս
հարցներ, խղյակեք ...:

Խեղճ միամիտը, ինչէ՛ն պիտի կրնար
կռահել այդ պահուն թէ՛ նոյն այն իբր գեղ
ցուցուցած շիշը պարզապէս ... չե՛ս
պարունակութիւն մըն էր ...:

Վաճառականները, մեր առուստուրի մար-
դիկը՝ անոնք պլ շա՛տ բաներ կը մտածեն,
կը խորհին, օրինակի համար, թէ՛ ի՞նչպէս
պիտի կրնան ճակատաբաց դուրս ելլել տա-
րեգլխի առթիւ իրենց պատրաստելիք պի-
շանջօյին մէջէն:

Վախը, կասկածը կը տանջէ զիրենք ներքնապէս մինչեւ ա՛յն ատեն՝ երբ կատարեալպէս տեղեկանան թէ՛ եզրակացութիւնը նպաստաւոր է իրենց, թէ՛ ...

Եւ ասոր ճիշդ հակառակը ըլլալու համար կարծես՝ միւս կողմանէ գրագիրներն ալ կը մտածեն թէ՛՝ Կաղանդի առթիւ ջօրպաճին ի՞նչ նուէր պիտի ընէ իրենց, եւ կամ թէ՛ ո՛ր եւ է յաւելում մը պիտի ըլլա՞յ արդեօք իրենց չ՛յաւելելու սահմանուած ... ամսականին վրայ, որով իրենք ալ գոնէ՛ հանդարտ սիրտով կարենան կարգուիլ իրենց նշանածներուն հետ, որոնք թերեւս վազ անցնելու հակամէտ են՝ վճռական մեծայո՛րին ա՛յնչափ տարամերժօրէն յապաղած ըլլալէն յուսահատելով:

Մեր մտաւորական դարգացումին ազդակները (°), վարժապետները, կը մտածեն որ Նոր Տարւոյ առթիւ բաւական մը հնչուն ընծայարարութեան պիտի կրնան ընդունիլ իրենց երախտապարտ սաներէն, եւ կարծեմ չա՛տ քիչերն են որ պիտի կրնային նպաստաւորուիլ իրենց չափ, քանի որ այդ առթիւ գոյացած արդիւնքով իրենք պիտի կրնան ... անցեալ տարուէն մնացեալ այսինչ նպարաւաճառին եւ կամ այն ինչ դերձակին իրենց ունեցած պարտքերը վճարել, եւ միւս կողմէ մաս մըն ալ վարդնելով տոկոսի տալ Քրէտի Լիօնէն, եթէ երբէք սակայն իրենք ... չ՛վճարեն տոկոսը՝ փոխառութեամբ մը իրենց պարտքերը գացելու եւ կամ ... քարտըսիւ մը առնելու համար (*):

Քահանաները կը մտածեն, եւ ամենէ՛ն ալ աւելի իրենք իրաւունք ունին խորհելու թէ՛ Մեռնողի առթիւ իրենց տնօրէնէքի հասոյթը մինչեւ քանի՞ զրուշի պիտի յանգի, ըստ այնմ՝ նախապէս տուրակ մը կարելու յանձնարարութիւն տուլու համար իրենց ...

(*) Հսածնուս նայելով՝ աս տարիէն սկսեալ՝ ամէն վարժապետ ու վարժուհի իրենց կաղանդէք դրամընծանքէն կամուոր տասանորդ մը պիտի վճարեն Ուսուցչաց Օգնութեան սնտուկին, ի հաշիւ իրենց ապագայ հանգստեան:

կէսին, կ'սպասեն որ Մեռնողի օրը իրենց ոտքերը գայ ... իր ոտքերով: Եւ մէկ մը որ հասաւ ա՛յդ երջանիկ պահը, այն ատեն իրենք զլո՛ւս քերելու անգամ ժամանակ չ'ունին, ինչպէս սովորութիւն է ըսել ...:

Հազիւ տակաւին եկեղեցին աւարտած՝ շուտով կը պատրաստուին վազելու համար այսօր ա՛ս կողմ, վաղը ուրիշ կողմ մը, երեկոյեան ժամերգութիւնն ալ չա՛տ անգամ մոռնալով եւ կա՛մ յապաւելով: Աջ ու ձախ լիակոկորդ ողջոյններ ու օրհնութիւններ կը բաշխեն, փոխարէն գրպանելով կըրթիկ ու պսպղուն մէճիտներ: Իբր տնօրէնէք:

Եւ ... մէկ մըն ալ, իրիկունը ուշ ատեն՝ կատարեալ չարշըլի մը յոգնաբեկ, պարտասած քայլերով կ'ուզան տուն, ճշդեւ թէ ի՞նչ եղաւ իրենց այն օրուան վաւսակը, եւ միեւնոյն ատեն ալ չեն մոռնար հետեւեալ օրուան հաշիւները պրպտելու, որոնք ո՛ւ հասոյթներու քանակութիւնը:


Եւ արդարեւ ի՞նչ բան աւելի հաճելի ու սիրուն, քան այդ հաշուետուութիւնները, անանկ չէ՞:

Ես վստահ եմ, որ այն ատեն քիչ մը ամէն մարդ ալ պիտի փափաքէր քահանայ եղած տեսնել ինքզինքը, բայց ո՛չ անշուշտ քահանայութեան ցեցը, մրուրը հանդիսանալու համար, ճիշդ մեր այսօրուան կարգ մը նորընծաներուն պէս, որոնք կարծես կ'սքանչանան վէսօրէն իրենց այդ առաքինութեան վրայ:

Եւ այս ամէնքէն ետք՝ երեւակայել թէ՛ մարդիկ կան մեր մէջ, որոնք կը մտածեն՝ տակաւին քահանայ չ'ըլլալու համար, եւ փոխողարձաբար ալ քահանաներ՝ որոնք ա՛յնքան զղջացած ըլլալու են այսօր ... եւսզմանութիւնը ձգած ու առ յաւիտ անկէ բաժնուած ըլլալուն համար:

Ի՞նչ մտածում եւ ի՞նչ հակասութիւն:

ԼԵՒՈՆ ԱՒԱԳԵԱՆ



Զ Ե Կ Ո Յ Յ

Կը խնդրուի Հանրագիտակի բաժանորդութենէ հաշիւ ունեցողներէ:

Վ. Ճարեւ անյոսպող

ՇԱԲԹՈՒԱՆ ԼՈՒՐԵՐ

ԳՈՒՄ-ԳԱԲՈՒՔՆ ԴԵՂ ԿԸ ԳՐԵՆ ԹԷ՝ տարիներէ ի վեր եկեղեցւոյ մէջ պաշտօնավարող կարեւոր պաշտօնեայ մը հրաժարելէն վերջ, գանձարանը թաղ. Խորհրդոյ քարտուղարին հետ վերաքննելով թրքաթրք են գտեր արձանագրութեան հետ: (Լա՛ւ, աղէ՛կ եա, աւոր մէջ ի՞նչ կայ: Ծ. Խ.):

ԹՕՓ-ԳԱԲՈՒՔՆ ԴԵՂ ԼՈՒՐ ԿՈՒՄԱՆ ԹԷ՝ անցեալ գիշեր տեղացի նոր փեսայ մը՝ իբր գրամօթիտ տեղեկ ըրած զուարթ գինեպանին հաշիւը կարգադրած եւ իր կնոջը ձմրան յատուկ գլխարկ մը չի կրնալ առնելուն պատճառաւ, փառաւոր ծեծ մը կերեր է զոքանչէն և հարսնուկէն: (Վա՛յ . . . ըսել է փեսայ ծեծող զոքանչներ ալ կը գտնուին եղեր: Ծ. Խ.):

ԷՏԻՆՃԻԿԻ մեր մասնաւոր թղթակցէն կը տեղեկանանք թէ՝ տեղւոյն Աղքատախնամի գործակատար աղան նրկատելով որ պատրաստ գրամը սնտուկին մէջ հասոյթ մը չի բերեր, սկսած է նարտի միջոցաւ շահագործել զայն. . . ի հաշիւ գրպանին: (Այս լուրը մերինները չի կարգացած ըլլան: Ծ. Խ.):

ՆՈՅՆ. — Տեղւոյս երկու քահանաները կշտացները բացարձակապէս անկարելի ըլլալով, կը խնդրենք խմբագրութենէ՞դ՝ որպէս զի մէկէն մէկը ճամբու դնելու համար ինչ միջոց գործածեն իս գիտցնէք մեզ: (Մերիններն ալ ստիկելու համար կ'աշխատինք կոր, երբ միջոց գտնանք՝ ձեզի ալ կ'իմացնենք: Ծ. Խ.):

ՍԿԻՒՏԱՐԷՆ կիմանանք թէ՝ գանձանակները փոխանակ չըջագայելու,

դէմ գիմաց թավլու կը խաղան եղեր. պատկանեալ մարմնոյն ուշագրութիւնը կը հրաւիրենք այս առթիւ, աւելցնելով թէ՝ այս շաբթու ալ ֆինկերսին խաղցնել չի տան անուշադրութեամբ: (Աղքատախնամէն օրինակ առէք, այսինքն պէտք է որ Պր. Հոգաբարձու անդամները ստանձնեն այդ կարեւորագոյն չըջագայութիւնը: Ծ. Խ.):

ՆՈՅՆ. — Թառապաշիւէն մեզ կիմացնեն թէ՝ ներկայ ձմեռամուսէն ի վեր փոխան սկամպիլի պատրաստող յաջորդական անուշեղէններէն և չաքարի սպառումէն, չաքարին հրապարակը զգալի վերելակ մը ունեցեր է: (Վերելակը ասանկոնէ՞ արդեօք՞ Ծ. Խ.):

ՆՈՅՆ, ԻՃԱՏԻԷ. — Հոս ինտէլիքենտ օրիորդի մը ամուսնութեան համար բէշերէն կախուող երկու հորազաա եղբայրներէն պզտիկը յաջողած ըլլալով ամուսնանալ յիշեալ օրիորդին հետ, մեծ եղբօրը միաց աղօթել և օրհնել նորապսակ ամուր: (Աստուած նորէն տայ, նորէն խնդացնէ: Ծ. Խ.):

ՆՈՅՆ. — Իճատիէի Պր. Աշտի սըրճարանը թղթախաղը արգիլուելուն պատճառաւ, տէմիրպաշ յաճախորդք թոթընին շարկած իրենց տունները քաշուեր են: (Սկամպիլի գարկ հիմա միւսի՛ւ . . . Ծ. Խ.):

Արսունասկր ԱՐՄԵՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Յ. ԱՍՏՏՈՒՐԵԱՆ

Պապը ալի ճառտեսի, բիւ 52



BOVININE

ՊՕՎԻՆԻՆ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԸՆՏԻՐ ՍՆՈՒՆԴԷ

ՓՈՔՐ ՏՂԱՅՈՑ

ՊԱՏԱՆԻՆԵՐՈՒ

ԵՒ ԾԵՐԵՐՈՒ

Bovinine կը պարունակէ զուտ անդային մասերն եղան մսին, ուղեղին, ժողովրդին և ֆոսֆորներն ոսկրային կազմուածքին, խտացեալ վիճակի մէջ:

Պոլիս նոր բերուած այս անզուգական կազդուրիչ դեղը, 27 տարիներէ ի վեր ծանօթ և գնահատուած ընդհանուր Ամերիկայի, Անգղիոյ, Ճաբոնի և Չինու համաբաւոր բժիշկներէն. շերմապէս կը յանձնարարուի ամէն անոնց՝ որոնք կ'զգան «ուժասպառութիւն, գալիութիւն, անախորժութիւն, ստամոքսի խանգարում, ընդհանուր ջլային տկարութիւն, նիհարութիւն, կուրծքի տկարութիւն, անախորժութիւն»:

Անգամ մը գործածութիւնը կը հաստատէ իր անզուգական յատկութիւնը:

Ընկերութեան միակ ներկայացուցիչը ԱՐԴԱՐԵԱՆ ԵՂԱՐԲ, Պահճէ-գաբու, Օսմանեան նամակատան ետեւի կողմը: Կը գտնուի նաև ամէն նշանաւոր դեղարաններու և գեղօրէից մթերանոցներու քով:

50—21

ՄԵԾ ՎԱՃԱՌ-ԱՏՈՒՆ

ԼԱՆՊԵՐՁԵԴՆԱՅ

Արտնց, Կանանց եւ Տղայոց

ՊԱՏՐԱՍՏ ԵՒ ԶԱՓՈՒ ՎՐԱՅ

Գ. ԷՐՄԷՆԵԱՆ եւ Ընկ.

Կ. Պոլիս, Սուլթան Համալ, Թօփալեան խան

Սոյն վաճառատունը, որ տարիներէ ի վեր իր ուղղութեամբ, ապրանաջ տոկունութեամբ և գիներու անմրցելի աժանութեամբ շահած է բոլոր իրեն գիմնը յաճախորդաց վստահութիւնը, այս անգամ ձմեռուան յատուկ ընտիր հազուստներու, կանանց քեյրոխներու և տղայոց շիք և գիմնակուն փոքրիկներու ճոխ մթերք մը պատրաստ ունի, որ շերմապէս կը յանձնարարուի ամէն անոնց, որոնք պէտք ունին ներկայ եղանակին հազուստի և ուրիշ նմանօրինակ պիտոյից:

Սակարկութիւն չկայ, թիւը 2 զըշ է:

Գաւառներէն յանձնարարութիւնք փութով կը կատարուին: 50—16

Գ. ԵԱՎՐՈՒԵԱՆ Յ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ԵԱՎՐՈՒԵԱՆ ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ՎԱՃԱՌԱՏՈՒՆ


ԸՆՏԻՐ, ԱԺԱՆ

ԹԷՅԻ ԽԱՌՆՈՒՐԴՆԵՐ

Ի Ի

ՄԻՇՏ ԱԺԱՆ ՈՒ ԹԱՐՄ ԵՆ

ՀՈՏԱԻՆՑ ԹԷՅԵՐ



Հ Է Ր Ճ Ա Յ Ի

ԱՊԱՌԻԿԻ ՄԵԾ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

Հէրճայի մեծ վաճառատունը՝ գոհարեղէններու ոսկի և արծաթ շղթայներու, դրպանի պատի և քօնսօլի ժամացոյցներու մասնաւոր վաճառումէն զատ՝ իր բազմաթիւ յաճախորդներու վստահութենէն քաջալերուած, այս անգամ կը փութայ յայտարարել թէ՝ ամէն եղանակի յատուկ վերջին նորաձեւութեան վրայ պատրաստ ունի արանց, կանանց և տղայոց համար ամէն տեսակ հագուստներ ու անձրեւի համար մուշամպա վերարկուներ, նաև ճերմակեղէններ, փանթէղիներ և թօափիէներ, ամբրիկեան կօշիկներ։ Ունի նաև կահկարասի, ձեղունի լամբարներ, մահճակալներ, եւրոպական ու անգղիական գորգեր, գետնի մուշամպաներ, կրամօֆօններ ու պիւսիկլէթներ՝ ամենավերջին կատարելութիւններով։

Հէրճայի վաճառատունը մայրաքաղաքիս մէջ միակն է, որ շահած է հանրութեան վստահութիւնը և գոհունակութիւնը իր ապրանքներու տոկունութեան և ոսկիներու մաքրութեան՝ ձեւաւորութեան և աժանութեան համար։

Ա Պ Ա Ռ Ի Կ

Միայն թէ գնուած ապրանքին հարիւրին 20ը կանխիկ, իսկմնացեալ գումարին համար շաբաթական հարիւրին 5 վճարմամբ պատրաստ է հայթայթել։

Վաճառատունս հաստատուած է

ՄԵԾ ՇՈՒԿԱՅ ՈՍԿԵՐՉՈՅ ՄԵԾ ՓՈՂՈՅ ԹԻԻ 13

Յնդամ մը այցելել բաւական է համոզուելու համար թէ՝ Հէրճայի անմրցելի կազմակերպութեամբ մը ի վիճակի է այսօր գոհացնել իր ամենէն դժուարահաճ յաճախորդները։

Կանխիկ գնողներու համար հարիւրին 5 զեղչ

ՍԱԿԱՐԿՈՒԹԻՒՆ ԶԿԱՅ

50-12

Շաբաթական վճարմանց համար հաւաքիչներ միշտ պատրաստ են։